

## ԱՐՏԱՍՏԱՐԱՆԵԱՆ ԳՐԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„LES AFFAIRES SONT LES AFFAIRES“, pièce en trois actes, de M.  
Octave Mirbeau.—«Կործերը» (աֆֆերա) գործ են», պիհա երեք գործողութիւ-  
նով, Օկտոտ Միրբօի:

Օկտոտ Միրբօն քրանսիական ժամանակակից զրականու-  
թեան խոշոր գէմքերից մէկն է. նա զերազանցում է մանաւանդ  
տենդենցիօց կամ ինչպէս թիւրքահայերը կ'ասեն՝ ձգտումի ժան-  
րի մէջ: Նրա ոճը և ոգին միտժաւանակ աւերիչ, համարեա  
տարերային են: Իր շուրջն իշխող կարգերից նա էլ շատերի  
պէս զժղոհ է, նա էլ իր երկերում հասարակական և բնական  
չարիքի արմատն է որոնում և կեանքի բոլոր առարքներում  
իրար բազմուռող մարդկային կրթերի, ձգտումների, պահանջների,  
ճաշակների զարհուրելի պարարը նրա փիլիխօսիայական-հա-  
սարակական խոհերին տալիս է մի անօրինակ ուժգնութիւն:  
Նրա ամենից աւելի սիրած նիւթը «Ժամանակակից բարքերի արա-  
գելիան է»: Օկտոտ Միրբօն կարողանում է զարհուրելի տրա-  
գելիա բաց անել այնտեղ, ուր չնորհիւ արտաքին վայելչու-  
թեան, կեզծ փայլի, հասարակական-բարոյական նախապաշար-  
մանքների, անցեալից ժառանգութիւն մնացած կեղծիքի, սիսալ  
հասկացուած առաքինութեան՝ սովորական աչքը տեսնում է  
առօրեայ սովորական կեանք իր ճակատագրական չար ու բարի-  
ով, արցունքով ու ծիծաղով: Նրա հասարակական փլլիստիա-  
յութիւնը հիմնուած է ժառանգականութեան թէորիոյի վրայ:  
Մարդը Միրբօի համար ի ծնէ վաս է, սովորեան նա իր հետ  
աշխարհ է բերում բազմաթիւ ախտեր, համարեա ոճրի ծարաւ,  
որ զարգացած, զօրացած է գարերի ընթացքում սիսալ զառ-  
տիարակութեամբ. այսպիսով կեանքը զառնում է «Ժանջնք-

ների պարտէց» (Le jardin des supplices), իսկ առաջնորդողները՝ «վաստ հովիւներ» (Les mauvais bergers) \*):

Մի կողմ թուղնենք այն հարցը, թէ Օկտոաւ Միբրօն որչափով իրաւունք ունի այս աստիճան յունեւես լինել, ինչու ամեն ինչ մարդու բնաւորութեան և կեանքի մէջ նրա աշքում ընդունում է հրէշաւոր չափեր, ինչու նրա ընտրած տիպերը հասարակակիան որ ասպարէզում էլ վնի՛ մարդու սոսկում են պատճառում իրանց ցինիգմով, գարշութեան մէջ լողալու այդ քսամնելի հաճոցքով: Դրանք ցաւոս հարցեր են, որ կարող էին մեզ շատ հեռաւ տանել, բայց ինչ որ արժանի է առանձին ուշագրութեան, այդ Միբրօի անկեղծ, ցաւակցական շնշոն է, նրա խորին արդահատանքն է տանջուող մարդու զլիսին ծանրացած այդ սե ճակատագրի համար: Միբրօն խեղճերի, հալածուածների, զրկուածների կարող պաշտպանն է: Կեանքի աղբերից, զարշութիւններից բարձր նա մ'եւ ցաւի պոէզիան է ըմբռնել: Եւ նրա ասածի, քարոզածի ոյժը այն աստիճան վարակիչ է որպէս տրամադրութիւն, որ նրա երկերից իւրաքանչիւրը ընթերցողին պատճառում է մի կիպիչ կոկիծ և տարարազդարար զրա հիտ միասին մի վհատեցուցիչ ահվատահութիւն զէպի մարդ արարածը: Իւրաքանչիւր անձանոթ զէմք դառնում է մի զիմակ, որ ծածկում է ող զիտէ՝ ինչ մութ մաքեր, ինչ քսորմների ծրագրներ իր նմանների համար: Չեմ ուզում շատ ծանրանալ Միբրօի երկերի ընդհանուր բնորոշ զծերի վրայ, որովհետեւ այդ զէմքը մասսամբ ծանօթ է Մուբճի ընթերցողներին շնորհիւ պ: Տիգրանի խելացի գրական յօդուածների: Այժմ ես կանգ կ'առնեմ մասնաւորապէս Միբրօի նոր պիեսայի:

Les affaires sont les affaires-hi վրայ. որ նորերս Comédie-Française-ում խաղացուեց առաջին անդամ և որ այնքան աղմուկ բարձրացրեց ֆրանսիական մամուլի մէջ: Յօդուածիս սկզբում ես այդ պիեսուն հայերէն անուանեցի «Գործերը՝ դորձնեն», սա իսկապէս մի բառացի թարգմանութիւն է, որ ամբողջապէս չի արտայայտում Միբրօի նոր երկի խորհուրդը. ներկայ զէպում «գործը» (affaire) պարզապէս ափքերայի նշանակութիւն ունի, հեղինակը մեզ ներկայացնում է ժամանակակից տիպերից այն մարդու հոգերանութենը, որի ծայրացեղ յաջութիւնը կեանքում հաստատուած է միջոցների նոյնքան ծայրայեղ անխարականութեան, բարոյական սկզբունքների կատարեալ բացառութեան վրայ: Այս փոքրիկ, բայց անհրաժեշտ նըկատողութիւնից յետոյ գառնանք բուն նիւթին:

\*.) Օկ. Միբրօի երկու յայտնի երկերն են:

Օկտաւ Միրբօի այս նոր պիեսան ամբողջապէս պատւում է մի հատիկ անձնաւորութեան՝ Լեշայի շուրջը, որ գլխաւոր հերոսն է: Տաղմանզաւոր հեղինակը մինչև անկարելիութիւն խոսացըրել է իր հերոսի բնաւորութեան մէջ այն բոլոր ոինչիկ գարշութիւնները, որոնք կապուած են զրամի բացառիկ կուրտի և խայտառակ ափերսների հետ: Եա կամնայել է զգուանք յարուցանել՝ փոելով հասարակութեան առաջ կապիտալիզմի և կապիտալի մշակած բնաւորութեան հրէշաւոր կողմերը: Լեշան մի ընդունակ պարկմնիւ (parvenu) է, մութ ափերսներով յիսուն միլիոնի տէր գարձած մի կապիտալիստ, որ աշխարհում ուրիշ չի ճանաչում, բացի զրամականը, ուրիշ ազնւութիւն, բացի հարստութիւնը, ուրիշ երաւունքը, բացի զրամի ոյժի իրաւունքը: Լեշան կարծէր մարդ չէ, այլ զարհուրելի խառնուրդ մի բանական երկուանի արարածի և զազանի, տգիտութեան և փրուած անպատկառութեան, սառնասիրա ոճրագործի և պարզամիտ յիմարութեան: Եւ այդ մարդը բացի իր յիսուն միլիոն՝ Պարիզից ոչ հեռու ձեռք է բերել մի պատմական դղեակ՝ ծառերի մէջ կորած, և որի շուրջը տարածում է նրա եօթ հազար հեկտար սեփականութիւնը, որ նա սիրում է իր մօտ եկող այցելուներին յոյց տալ ձեռքի լայն շարժումով: Ամեն անզամ տուն գալիս՝ նրա ծառաները պատուէր ունին շրջապատել նրան և կանչել՝ «կեցցէ Լեշան, կեցցէ Լեշան»: Իր անպատկառ ու ծիծագելի հպարտութիւնը գոհացումն է սառնում վճարուած ծառաների բացականչութեամբ: Իր յիսուն միլիոնից, իր դղեակից և կալուածներից դուրս նրա հպարտութեան առարկան է իր որդի Քասարիէն, հօր իսկական ժառանգը Այս որդու իրական «առաջինութիւններն» այսպէս է նկարագրում այս տարօրինակ հայրը:

«Եա մրցութիւնների համար մի ծի ունի, մի նաւ և մի օտոմորիլ, որ արժէ յիսուն հազար ֆրանկ: Բարեկամներ ունի ամենաբարձր հասարակութեան մէջ, և նրանն են նաև Պարիզի ամենասիրուն զերասանուէնները. «Նա՝ այն լակուտը քասան և մէկ տարեկան է և սակայն արդէն ընկել է մի քանի չիկ սկանդալների մէջ»: Եւ այս որդին նրա յոյսն է, նրա ապագան. նա կարող է անել, ինչ ուզում է, ծախսել՝ որքան կամենում է, միայն թէ կարողանայ կապեր հաստատել՝ հօր մութ գործերին ընթացք տալու համար: Այդ կարգի ծախքերի համար Լեշան առատաձեռն է, բայց նա ուզում է դատի ենթարկել մի աղքատ պառաւի, որ նրա կալուածից չոր ցախեր է հաւաքել, կտրում է իր պարտիզանի գարձը, մի կոմի հիւանդութեան համար կա-

տաղում է և անձամբ գոմն է զնում տեսնելու, թէ ինչ է անում բժիշկը:

Նա չի քաշում փոել հասարակութեան առաջ իր հրէշաւոր հոգու բոլոր այլանդակութիւնները այն սոսկալի զիտակցութեամբ, թէ ինքը իրաւունք ունի և թէ իսկական մարդն իր պէս պիտի լինի:

«Օ՛, խոշոր աֆֆերաներ, բացականչում է նա երկու ինժեներների ներկայութեամբ, ուր մարդ կարողանայ բազմութիւնը խաղացնել... և գոփել միլիոններ լիքը ձևոքով, ուիշների միլիոնները, հը...»

Մի աղուականի հետ վէճի բռնուած՝ նա բացականչում է. «Պատիւ, պատիւ, իհարկէ. բայց իւրաքանչիւրը իր ձեռլ է հասկանում պատիւը...» Եւ կեշայի հասկացողութիւնը պատիւ, առաքինութեան, ազնւութեան, շիտակութեան մասին զուտ գալլային է, եթէ ախորդակդ մեծ է և թաթդ հզօր, զարկ, խրմիր ու անցիր, մնացածը հեշտ է, երբ գրամ կայ, մեծ գրամ, հսկայական կապիտալ, որով ինչ ասես՝ հասրաւոր է այս աշխարհում: «Ամեն կեղա կարելի է մաքրել, ամեն կեղա», ասում է նա մի այլ տեղ: Նա համոզուած է, որ ինքն ամեն ինչ զիտէ, որովհետեւ երբ մարդ ձեռք է բերում յիսուն միլիոն, չփ կարող ամեն ինչ չ'իմանալ, և այն կապիտալիստը, որ խարել է այնքան ուրիշների և կուտել ոսկու գէզ, այնքան ապուշ է միենոյն ժամանակ, որ վճռում է քիմիական բաղադրութեամբ ֆրանսիայում շաքարեղէզն, սուրճ, թէյ բուսացներ, իրան կարծում է մեծ բեղորմատոր, որովհետեւ երբ ֆրանսիայում շաքարեղէզն և ատաք երկրի այլ բայսեր լինին, եւ ինչ հարկաւոր է զաղթականութիւններ հիմնել: Այս ապշութեան հետ միաժամանակ այնքան խելք ունի, որ հասկանում է մամուլի ոյժն աֆֆերաների համար և հիմնել է իր սեփական թերթը: «Իմ լրագրում, ասում է նա, զրականութիւն, զրադէտ, զանազան ֆրազներ հարկաւոր չեն, այլ փաստեր պարզ ու որոշ և զործեր...»

Այս թշուառականի համար աշխարհի խեղճերը, կարօտները, կեանքի բեռի տակ ճխլուածները ոչինչ են, նրանք ոչ մի իրաւունք չ'ունեն, ինչպէս այն ողորմելի ճիճունները, ուրո՞նք յանցանք են գործում սողալ ճանապարհներին և ոտքի տակ արորււում են: Սա նրա բարոյական փիլիսոփիայութիւնն է, որ նա գործադրում է կեանքի մէջ առանց քաշուելու, որովհետեւ դրամ ունի. մի անգամ նա անողորմ սրիկայութեամբ իր կառքի տակ ճխլում է մի աղքատ երեխայ, որովհետեւ կարող է վճարել արեան զինը:

Ահա մօտաւորապէս այն մարդը, որ Միբրօն ընտրել է որպէս հերոս՝ կապիտալիզմը և կապիտալը պատկերացնելու համար: Անշուշտ չափազանցութիւնները շատ են այս պատկերի մէջ, դժուար թէ կարեկի լինի կեանքում զանել մի այնպիսի գարշելի դժբաղդ, որ միացնէր իր անձի մէջ հարստութեան և հարստի բոլոր ախտերը, բայց պատկերները խառացնելը բանաստեղծի իրաւունքն է՝ իր զաղափարները բելիք զարդնելու համար: Թէ այս բոլոր աղտեղութիւնները մի մարդու հոգին չի կարող պարտակել, այդ ճշմարիտ է, բայց կեանքում բազմաթիւ են տիպեր, որոնք մաս-մաս կրում են իրանց մէջ այն, ինչ Միբրօն տուել է միայն Լեշային, այստեղ է բանասանեղծի իրաւունքի հիմունքը:

Դասական աշխարհը իր մանուկ երեակայութեամբ մեծ ոճիրների կողքին դնում էր մեծ քաւութեան ճակատագիրը, որ սաւառնում էր յանցաւորի զլիսին որոշ մոռմենտին նրա աչքերի առաջ ցցուելու համար: Խորը բոզոքում էր, որպէս մարմնացումըն հասարակական իմաստութեան, արգարադատութեան և խղճի, իսկ բաղդր հարուածում: Շատ անդամ յանցաւորն ինքն էր ծնում իր պատիմը, նոր աշխարհը ճակատագրի դերը յանձնել է զիպուածին և պատիմը խղճին ու բանականութեանը:

Միբրօի այս պիեսայի մէջ թէ իսիդը և թէ զիպուածը խաղում են իրանց ճակատագրական գերը նոր աշխարհի հասկացողութեամբ: Լեշան որդուց բացի և մի աղջիկ ունի-ժերմենը, որի վրայ հայրը նայում է զուտ նիւթական տեսակէտից: Նա նրան կ'ամուսնացնի մի ազնւականի հետ, որ իր պարտապանն է, և այսպիսով փայլուն տիպուսը կը միացնի հարստութեան հետ: Բայց ամենակարող կապիտալը, որ ուրիշի երեխաների զիակները՝ վշրում է անցնում, անզօր է իր սեփական դաւակի վերաբերմամբ: Ժերմենը հօր յանկութիւնը մերժում է, նա հետեւում է իր սրտին, նա անձնատուր է եղել արդէն իր սիրած տղամարդին, հօր մօտ աշխատաղ մի քիմիկոսի: Այս դեռ քիչ է, լեշայից ծնուած այդ մի փիբրուն արարածը իր հոգում կրում է նաև իր հօր ուների տակ ընկած զոհերի սուզը, նա զղում է դժբաղների զգացած ցաւը, նա ապրում է խեղձերի և տառապողների կսկիծը՝ նախ խուլ ձեռվ, ապա բարձրաձայն: Աղջիկը իր հօր խիզն է կարծեա, որ հեղինակը դրել է յանցաւոր անհատից գուրս, որովհետեւ լեշայի այնքան ընկած հոգու մէջ էլ խղճի տեղ չի մնացել: Լեշայի հրէշաւոր պատկերը կը խեղզէր մարդի, սթէ նրա կողքին չը լսուեր այդ չփոսկ, աղնիւ ձայնը, եթէ ժերմենը հօր արարագների առաջ զայրոյթի, ամօթի, ցաւի նուիրական աղաղակը չ'արձակէր: Եւ աղջկաւ

ՄԹՈՒՆՔՆԵՐՈՎ արտասահնուած հօր մեղադրական ակար ամբողջ պատկերին տալիս է մի վեհ արագիզմ, և մի մեղմ ափոփանք է իջնում վրդովուած հոգու վրայ:

«Մեր տնեմը... ասում է ժերմենն իր սիրած աղամարդին, շարունակ հապճեպ, տենդ, գրազդութիւն... Ծամածուզ, այլանդակ քրթիչ, ոճրի ասաուածացումն, ահա մեր... Երեկոները սեղանի առաջ օտարների և մեր ներկայութեամբ նա (Հայրը) պատմում է իր յաջող հարուածները, մահասարսուռ իմոցութեամբ, մարդասպանի իսկական ծիծազով նա մեզ պատմում էր, թէ ինքը խարել է սրան, կողովտել է միւսին, պատիւն արատաւորել մի երրորդին... Ես էլ չեմ կարողանում փողոցում տեսնել մի սղաւոր կին կամ երեխաներ՝ առանց ինքս ինձ ասելու, թէ «գուցէ սրանց սովոր մենք ենք պատճառել»: Ես չեմ կարողանում տեսնել մէկին արտասուելիս առանց մտածելու, թէ «գուցէ նա մեր պատճառով է լալիս»:

Իրանց հինաւորց հակայական դղեակը, իրանց ահազին կալուածները ժերմենի համար յանցանիների և զողոթեան արդիւնք են. Նրա հոգին չի կարողանում հաշտուել այն գիտակցութեան հետ, թը ինքը մի ոճրագործի, մի աւազակի տղիկ է, թէ ինքը ապրում է նրա հաշուով, ուրիշների արցունքի, արեան գնով: Նա ինզրում, աղերսում է իր սիրահարին փախչել իր հետ, տանել նրան հեռու, հեռու այս ապակամութեան, յանցանիքի, կեղծիքի, խարէութեան վայրերից: Նա ուզում է ազատուել այսպիսով իրան ճնշող կոշմարից, հօրը յանցակից լինելու գարնուրելի գիտակցութիւնից: Նա զիշերներն անքուն թափառել է մասյլ դղեակի շարչը, և իր երեկայութիւնը սոսկումով է բանուել այն արցունքի մեծութիւնից, որի վրայ իրանք ապրում են, այս առթիւ նա ասում է.

«Ես տեսայ ամենածանր, ամենաիրական, համարեա փիզիկական պատկերը այն բռլրի, ինչ ծածկում է այս դղեակը, ինչ նա փշրել է, ինչ սպանել իր շուրջը... Սյս անտառները... այս դաշտերը... այս պարաեզրը... քարերի այս զանդուածը, որ անսիրտ կերպով ցցուած է արեի առաջ, այս բռլրը... ոճիքներ են, խոսի ոչ մի ծիլ, ոչ մի խիճ, ոչ մի փոքրիկ շաւիդ, որ զողացուած չը լինի: Եւ ես լսում էի միայն լացի ձայներ, և տեսնում էի միայն արիւն, ինձ թւում էր, թէ իմ շուրջն ամեն ինչ ձշում է՝ «գնդ, գնդ»:

Եւ այս աղջիկը ձգում է հայրենական տունը, ձգում է ծով հարսաւութիւնը, որ նաև ծով արիւն-արցունք կայ, և զընում է իր մաքուր սիրոյ, իր սրափ յետեից, գնում է ընտրած երիտասարդի հետ հեռու, հեռու յանցակից վայրերից՝ աղնիւ

աշխատանքով ապրուստ հայթհայթելու, իեշան կատաղում, փըրփրում է ոչ այն պատճառով, որ աղջիկը նրան գատապարտում է, այլ որովհետեւ նրա փայտիցած ծրագիրն է մնում անիրազործիլ, և իր կապիտալի, իր ամենակարող միլիոնների անզօրութիւնն է տեսնում անակնկալ կերպով, անսպասելի տեղից: Սակայն նա չի ընկճռում, փրփրում է և հանգստանում, աղջիկը թող գնայ, Քսաւեիէն կայ, իր որդին, նա բաւական է իր անյազուրդ իղձերի, իր ամօթալի և ողորմելի փառասիրութեան համար, նա մի խածուած գագան է, որ ցնցւում է և կրկին հանգստանում՝ վտանգն աննշան համարելով. նա զեռ կարող է իր սովորականի պէս կրկնել «Les Affaires sont les Affaires»— զործերը գործ են, ինչ էլ պատահելու լինի:

Զարթած ու բողոքող խիզճը իր աղջկայ մէջ մարմնացած անզօր է գանուում խախտել առան մետաղից ծուլուած այդ սիւնը. ահա վրայ է համուում երկրորդ մեծ փորձութիւնը, այն, որ հները համարում էին բազդ և նոր ժամանակներում կոչւում է դիպուած: Աղջկայ մեկնելուց անոմիջապէս յետոյ իեշան ստանում է իր որդու, Քսաւեիէի մահուան բօթը: Նա զոհ է զընացել մի սարսափելի զիպուածի, օտուլորիլը զարկուել է մի ծառի և նրան ջարդ ու փշուր արել: Սա արդէն մի թոյլ աղջկայ յուսահատ բողոք, շխտակ խղճի մի աղաղակ չէ, սա մի ամբողջ ապագայի բարոր յոյսերի աւերածն է. Իեշան ընկճռում է, թւում է նոյնիսկ, թէ նա անդառնալի կերպով խորտակուած է: Ուսները գողում են, էլ ոյժ չ'ունի ընդառաջ զնալու որդու զիակին, և այսաեղ միլիոնները ոչինչ ոչինչ չեն կարող անել. մարդկային կարողութիւնից վեր մի անհստանելի բան կայ, որ իր բոլոր ծանրութեամբ իշել է նրա զիմին: Էլ ում համար ապրել, ինչո՞ւ աշխատել, ինչ անել միլիոնները:

Թւում է, թէ արագեիման արանով էլ կը վերջանայ. ամենակարող իեշան խորտակուած է, սիրտը, զզացմոնքը յաղթանակում է, բայց ոչ, Միբրօն որոշել է ներկայացնել մի հրէշ, ոսկով, աֆֆերաներով այլասեռուած մի արարած: Եւ ահա ընտանեկան մեծ սզի ամենածանր վայրկենում յայտնուում են երկու ոչ պակաս թշուառական ինժեներներ, նրանք բերել են ստորագրել տալու մի պայմանաթուղթ, որ կազմուած է 'ի վեաս իեշայի: Բայց նա զործի, աֆֆերայի մարդ է, իր զերադոյն սզի մէջ անզօմ վաստակի անյազուրդ իղճը զարթնում է նրա մէջ իր բոլոր ուժինութեամբ, նա զգում է վտանգը, առնում է թուղթը, կարգում է ուշադրութեամբ, երկու ինժեներներին նստացնում է սեղսնի առաջ, թելաղրում է իր ցանկացած պայմանը, սարբագրել տալիս, թւողթը վերցնում, նրանց

ճանապարհ ձգում, իսկ ինքը օրօրուելով դնում դէպի որդու զիակը. Les Affaires sont les Affaires! Զաւակները չը կան էլ, բայց «գործերը», աֆֆերաները մնում են, կեշան գեռ կ'ապրի, դիակների վրայից քայլող կապիտալն է նա:

JOVSELLE, en quatre actes, M. Moeterlinck.—Ժուազի, չորս գործող.  
Պ. Մհաբլինկի:

Մորիս Մետերլինկը մինչև իր «Մոնաշ-Վաննան առւել է արդէն մի շարք զրամատիկական գրուածներ, որոնց բոլորի նիւթն էլ վերցրած են կիսաառասպիկական, կիսաիրական զըրոյցներից, հեղինակի յերիւրած՝ կամ պարզապէս վերցրած որուէ երկրի ժողովրդական բանաստեղծութիւնից: Այդ երկերի ամբողջամթիւնը ներկայացնում է մի ֆանտաստիկ աշխարհ, ուր ընթերցողի երեակայութիւնը չփոթւում, խանուում է, և ուր հոգին տանջւում է անորոշ խարխափումներով, ինչպէս մութ զիշերին մոլորուած մէկը, որ դժուարութեամբ է քայլում քարքարոս առապարներով: Դէմքեր և պատկերներ են, որոնք շտապով գալիս, անցնում են մարդու աչքի առաջից առանց որ կարելի վնի որոշել նրանց ինչ վնելը, հեռաւոր խաւարի մէջ լուսում է նրանց քրքիջը կամ հեծեծանիները, և ապա ամեն բան լուսում: Ամենքն իրանց հետ փախցնում են մի գերագոյն միտեր, անյազուրդ թողնելով յարուցած այրով հետաքրքրութիւնը: Բանելու, պահելու, մօտիկից նայելու ցանկութիւն կայ, բայց այդ անկարելի է, և հոգին հերին նայում է այդ խուսափող պատկերների յետեկից վշտացած ու գժուն:

Մոնաշ-Վաննայով Մետերլինկ կարծես հրաժարում էր ասսամբ իր ֆանտաստիկ աշխարհից և իջնում էր իրական հողի վրայ: Մի վերին աստիճանի սփոփիչ բան կար նրա այս վերջին թագունական երկի մէջ, ուր հերոսուհին՝ թէն գրուած բացառիկ պայմանների մէջ, արագիկական միթնոլորտում, ոգեւորուած հազեագիւտ ներշնչումներով, այնու ամենայնիւ շարժըւում, գործում, խօսում է մարդկայնօրէն: Հեղինակի գրականութեան մէջ սա արդէն մի թոփչք էր, համարեա մի նորութիւն, որ ողջունեցին քննադատները, և ծափահարեց ընթերցող հասարակութիւնը:

Ամենքն իրաւացի կերպով սպասում էին, որ տաղանդաւոր հեղինակի հոգու մէջ կատարուող այս էվոլիւցիան նրան վերջնականապէս կը տանի դէպի իրականը, և որ Մետերլինկ ընդ միշտ կը հրաժարուի իր նախկին միզապատ, շատ անգամ

անհասկանալի ստեղծագործութիւններից։ Բայց ինչպէս երեսում է, «Խշանուհի Մարիյնի» և «Պելէսա և Մելիզանդի» հեղինակը հշտութեամբ չի կարուում մի անցեալից, ուր նա այնքան երազ-ներ, այնքան վերացական խորհրդանշաններ, այնքան միստերներ ունի։ Գոնէ այս է վկայում նրա նոր գործը՝ Joyzelle—ժուա-զել, որ վերջերս խաղացուել է Պարիզի Théâtre Gymnase-ում։ Ինքը հեղինակը զանուում է, որ իր այս երկը միջին տեղն է ըրու-նում նախուին գրամաների և Մոննա-Վաննայի մէջ։ այս նկա-տուութիւնը կարող էր ճիշտ լինել, եթէ գերբնականը այնքան խոշոր տեղ չը բանէր ժուազելի մէջ։ Հեղինակները յաճախ ի-րանց երկերի լաւագոյն քննադատները չեն։

Բայց և այնպէս չնորհակալ լինինք Մետերլինկից, նա ին-քը գերբնական արարած, երկնքի, վենուսի, Մարսի բնակիչ չէ, նիւթով կապուած է այս մեր ողորմելի ցեխէ զունդին, որի ա-նունն է երկիր Ինչքան և իր ստեղծագործութիւնները ֆան-տաստիկ, երազական լինեն, նա այնուամենայնիւ մարգկային խղճալի ճակատագրի կեանքի անհասկանալի ցաւերի տակ տա-ռապող մի հոգի է։ Եթէ իր ներշնչումները պարուրում է շատ անգամ բազմութեանը անընդունելի, վերացական պատկերների մէջ, յանցանքն իրանը չէ. իդէալի համար մեր արտասուելի դոյու-թիւնը բաւականաշափ գեղեցիկ չէ, մինչեւ անգամ չափազանց վիւզեր է։ Եւ տառապող, ճշմարտութեան, գեղեցիկ ծարաւ հո-զիները Մետերլինկից էլ առաջ ստիպուած են եղել նետուել անհունը, անձանաչելին, անյայտը՝ բնութեան, կեանքի, ճակա-տագրի միստերը գանելու համար։

Ահա «Ժուազելը», Մետերլինկի վերջին պիեսան, որ սի-րոյ աստուածացումն է։ Հեղինակը իրան յատուկ պերճ ոճով ճշմարիտ սէրը զնուում է կեանքի ամենօրեայ զոենկութիւնից բարձր մի տաճարի մէջ, որտեղից ծագում են վաեմ ներշնչում-ներ, մի անօրինակ փայլ կեանքը գեղեցկացնելու։ Համար։ Այս երկի հիմնական գաղափարը աշխարհին ասելու համար ինչ ա-նէր խեղճ Մետերլինին, ուր ֆնարէր փաստեր, պատկերներ՝ գու-նատ իրականութեան, զգացմունքների, սիրոյ վաճառքի, կեղ-ծիքի այս գործնական անձնաւորութիւն, Մերլեն անունով, որ օժառուած է գերբնական ընդունակութիւններով, որ կանխատե-սել է ապագան, չարիքը, բարիքը, գիտէ կարդալ ճակատագիրը, ընդգրկել այն բոլորը, ինչ չէ տուած ճանաչել սովորական մահկանացուներին։ Եւ նրա այդ գիւթական կարողութեան աղ-բիւրն է մի ուրիշ անձնաւորութիւն, Արիէլը, երկու քոյր, կամ

աւելի ճիշտ՝ երկւորեակ հոգիներ, որոնք իրար լրացնում են և յախտենականութեան լեզուն դիտեն:

Մերլենը մի որդի ունի, Լանսէօր անունով, որին կ'ուզէր մի երջանիկ ապագայ պատրաստել: Սըրէլը՝ սակայն այդ երջանիւթեան կարելիութիւնը կապում է մի պայմանի հետ, որից սոսկում է Մերլենը: Եթէ Լանսէօրը, ասում է նա, չ'արժանանայ մի կնոջ իսկական սիրուն, նա կը մեռնի: Այդ սիրոյ նկարագիրը սքանչելի է: այն պիտի լինի անօրինակ, հերոսական և ներող, ամենատեսակ զոհաբերութեան պատրաստ և համեստ, համբերող և վսիմ, խոր և թեթև, մի խօսքով մի գերընական, երկնային սէր, որին մահկանացուները շատ էլ սովոր չեն: Մերլենը յուսահատուած է, որդու մահուան ժամանակը ձեռու չէ, բայց այն փրկիչ հրեշտակը, այն սիրող կինը չը կայ: Երաքանչիւր օր, որ անցնում է, տանում է իր հետ Մերլենի յոյսի մի մասը, օրհասական վայրկեանը, որդու մահուան ժամը աւելի և աւելի մօտենում է: Բայց ահա յայտնւում է նա, սպասուած կինը, ժուագելը, մի քնքոյց, հրեշտականման արարած: Լանսէօրը և ժուագելը սիրում են իրար բուռն, անզուսպ սիրով:

Սկսում է ժուագելի համար անօրինակ փորձութիւնների շրջանը: Լանսէօրը փոխասփոխ դառնում է փիզիկապէս և բարյապէս գարշելի: նա հիւանդ է, այլանդակ, նա ծեր է ու զառամեալ, նա անառակ է, անհաւատարիմ, խաբեցայ, և բոլոր այդ փոփոխութիւնների ժամանակ, բոլոր այդ գժբաղդութիւնների ընթացքում ժուագելը շարունակում է սիրել Լանսէօրին, ներում, սփոփում, միսիթարում է նրան: Նրա զգացմունքը այնքան խորն է դէպի Լանսէօրը, որ ոչ մի փորձութիւն, ոչ մի դառնութիւն չի կարողանում նրան ընկճել: Վրայ է հասնում վերջին փորձութիւնը, ամենասարսափելին, սիրող կինը, ժուագելը իր սիրած տղամարդին փրկելու համար պիտի յանձն առնի գարհուրելի զոհաբերութիւն, նա պէտք է մի գիշեր պատկանի մի գարշելի արարածի: Ժուագելը զաշոյնը ձեռքին մօտենում է աղտեղութեան այդ անկողնին, նա պատրաստ է և սպանութիւն գործել, բայց այստեղ վերջանում է նրա փորձութիւնը, և ճշմարիտ սէրը դուրս է գալիս յաղթանակով: Բոլոր փորձութիւնները պատրաստուած էին ժուագելի սիրոյ մեծութիւնն իմանալու համար:

Մաքուր, անկեղծ սիրոյ յաղթանակը, որ այս պիեսայի հիմնական գաղափարն է, մասամբ յիշեցնում է Մոննա-Վաննան: Մետերլինին իր այս նոր գործով մի քայլ հեռանում է նախընթաց պիեսայի ժամրից, բայց մնում է նոյն իդէալիստը, նոյն երացողը: Եթէ կայ մի ժամանակ, երբ ամենից աւելի պէտք է իդէալը պատշոնիս, 1903.

կերացնելու համար դրաւիչ ձեռք, սիմվոլներ փնտրել, երբ  
պէտք է կեանքին, զունատ իրականութեանը հակադրել վսեծ  
գեղեցկութիւններ, թէկուզ երեակայական, դա մեր ժամանակը,  
մեր օրերն են: Մետերլինկն իրաւունք ունի երաղել, երբ իր  
շուրջը չոր նիւթապաշտութիւնը, անոպատկառ շահասիրու-  
թիւնը օր-աւուր աւելի և աւելի խեղդում է իդէալը, գեղեց-  
կութիւնը կեանքի:

Ա. Ա.